



David Dorfman Dance « ԴԵՅՎԻԴ ԴՈՐՖՄԱՆ » ՊԱՐԱԽՈՒՄԲ , Նյու Յորք

« Դեյվիդ Դորֆման » պարախումբը ներկայացնում է նոր գործեր համաշխարհային լսարաններին: Հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Դեյվիդ Դորֆմանի առաջնորդությամբ, խումբը կապ է հաստատում հանդիսատեսի հետ, խրախուսելով եւ հեշտացնելով ակտիվ խոսակցության զարգացումն այն թեմաների եւ խնդիրների մասին, որոնք հետազոտվում են ներկայացման ընթացքում: Դորֆմանի ինքնուրույն մտտեցումը պարի նկատմամբ ապահովում է առօրյա հերոսականության եւ հատկանշական հումորի ու պայծառի փորձառության մատուցումը:

1985 թվականին հիմնված « Դեյվիդ Դորֆման » պարախումբը ունեցել է բազմաթիվ ելույթներ հյուսիսային եւ հարավային Ամերիկաներում, Մեծն Բրիտանիայում եւ Եւրոպայում, եւ վերջերս՝ Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ ու Կրասնոյարսկ եւ Լեհաստանի Բիտոմ ու Կրակով քաղաքներում: Խումբն արժանացել է ութը « Բեսի » մրցանակների եւ 2007 թվականից հանդիսանում է « կենվոր » խումբը Կոնեկտիկուտ կոլեջում:

Գեղարվեստական ղեկավարի մասին

Դեյվիդ Դորֆմանը՝ պարախումբի հիմնադիր գեղարվեստական ղեկավարը, պարագիտության ամբիոնի վարիչն է Կոնեկտիկուտ կոլեջում, որտեղ դասավանդում է 2004 թվականից: 2005-ին ստացել է Գուգենհայմ անվան կրթաթոշակը: Արժանացել է չորս կրթաթոշակների՝ ԱՄՆ Արվեստի ազգային հիմնադրամից, երեք կրթաթոշակների՝ Նյու Յորքի արվեստի հիմնադրամից, « Ամերիկյան պարուսույց » մրցանակին, առաջին Պոլ Թեյլլորի անվան կրթաթոշակին՝ The Yard-ից, « Մարթա Հիլ » պարի հիմնադրամի ասպարեզի միջին շրջանի մրցանակին, եւ « Բեսի » մրցանակին « Դեյվիդ Դորֆման » պարախումբի համայնքային հիմքով « *Ընտանեկան շարժումներ (Ընտանիքի նախագիծ)* » նախագծի համար:

Մեջբերումներ մամուլից

« ...երկնայի՛ն պար »

The Village Voice

« ... մշուշոտ հետմիջօրեի ռոքի համերգի ազատ, սահուն իմպրովիզացիա ու ճնշող էներգիա ... օժտված արագընթաց ինտերնետային դարաշրջանի համապատասխան ճարտարապետական խստությամբ եւ նրբորեն դաշնավորված տեխնիկայով: »

Los Angeles Times

« ... ամենաբարձր տեմպով, կանգ չառնող, լիառատ պար. ոտները բարձրացնող, ազդրերը դարձնող, կոնքը առաջ նետող, ձեռների վրա կանգնող, անիվի նման դարձող, կոնակը դարձնող, գետինը սահող, գլուխը շարժող, ոտնամատները թակող զվարճալիք: »

Rural Intelligence

Ընկերության կայքէջը (անգլերեն)

www.daviddorfmandance.org

Տեսահոլովակներ

Disavowal

http://www.daviddorfmandance.org/view_video.php?id=3

underground

www.daviddorfmandance.org/view_video.php?id=2



BAM